Հայոցն է. և դարձեալ ի Հոռոմոց կողմն՝ ասէ վէզիրն թէ Դուք ևս զի՞նչ ասէք. և նոքա ասեն՝ Հրաման ձեր է. և նա ասէ. Եւ զայս թագաւորին թախլիս առնելոց եմ և տամ նոցա խէթիշէրիֆ։ Եւ յայնմ ժամու մարդ եկեալ ի թագաւորէն ի վէզիրն թէ Զայնէ զքեզ թագաւորն, եւ ելեալ երթայ։ Եւ օրս անձրեւ եկն մինչև ի Շաբաթ առաւօտուս (30 Օգոստ.)։ Եւ յաւուրքս թախլիս անէ վէզիրն թագաւորին զբանս զայսոսիկ եւ թագաւորն տայ հրաման թէ Գրեսցին[1]) էմիրքն. եւ եկեալ ի դուրս եւ գրեցին։

Կիրակիս (31 Օգոստ.) ուղարկեցին զՄարտիրոս վարդապետն բերել ի Պուրսայու զմեծ վարդապետն (Աստուածատուր)։ Եւ երեկոյիս հարսնիք գնացաք Լաչինի[2]) որդոյ Սահակի տղին Յարութենի։ Աւուրքս Մըսրայ խազնան եկաւ։

Սեպտեմբեր ամիս օր Բշի։ Զտէֆտէրտարն փոխեցին եւ ետուն նորա զՀալապ, եւ եդին տէֆտէրտար Մէհէմէտ քեհեա Սալէհ փաշային։

Դշի օրս (3 Սեպտ.) զյէնկիչէր աղասի չարն փոխեցին, որ ասի Հիւսէին, և դրսէն թագաւորին մեծ իմռահօռ զոմն եդին աղա։

Ուրբաթ օրս (5 Սեպտ.) ձայնեալ թագաւորին զվէզիրն և երթայ ի ներս և առեալ զմօհուրն տայ Քեօփրուլու Մէհէմէտ փաշային՝ վէզիրութեան։ Եւ զայս տեսեալ Հոռոմոցն, որք յայնժամ ասէին թէ Մեք չունիմք տաւա ընդ Հայոցն և ոչ գային ի տիւանն, յայսմ գիշերի պատրիկն իւրեանց յամենայն յեկեղեցիս թուղթ յղեալ և զպատվաւոր արսն զամենայն ի մի վայր հաւաքեալ, երթան առաւօտուս Շաբաթ (6 Սեպտ.) ի տիւանն և տան մի և երկու արզուհալ վէզիրին և կար-

1) գրեսցի. 2) Լաչին.